ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ /1991թ. սեպտեմբեր – 1992թ. հունվար/

1991թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանն ընդունեց Ադրբեջանում պետականության անկախության վերականգնման վերաբերյալ հռչակագիր[1], ըստ որի Ադրբեջանը հայտարարվեց ԽՍՀՄ-ից անկախ: Նորանկախ Ադրբեջանի հանրապետությունը պետք է ընդգրկված լիներ 1918-1920թթ. մուսավաթական Ադրբեջանի հանրապետության սահմաններում: Նույն թվականի հոկտեմբերին Բաքուն ընդունեց նոր սահմանադրություն, որի համաձայն վերականգնվում էր մուսավաթական Ադրբեջանի Հանրապետությունը:

Քաջ հայտնի է, որ մուսավաթական Ադրբեջանն իր կազմում չի ունեցել ոչ Նախիջևանը և ոչ էլ Լեռնային Ղարաբաղը: Ադրբեջանը դուրս գալով Խորհրդային Միությունից, հույս ուներ իր հետ տանել նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Մինչդեռ, 1990թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնված ազգային-վարչական միավորներն իրենք կարող էին տնօրինել իրենց ճակատագիրը: Այդ որոշումը ԼՂԻՄ-ին իրավունք էր վերապահում օրինական ճանապարհով բաժանվել նորանկախացած Ադրբեջանի հանրապետությունից և կիրառել ինքնորոշման իր իրավունքը: Արցախահայությունը, բնականաբար, պետք է օգտվեր իր այդ իրավունքից: Եվ ահա, 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը բազմակողմանի քննության առնելով ստեղծված իրավիճակը, ընդունեց Հռչակագիր՝ ԼՂԻՄ և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության /ԼՂՀ/ հռչակելու մասին[2]: Նույն նստաշրջանում հանրապետության Գործադիր խորհրդի նախագահ ընտրվեց Լեոնարդ Պետրոսյանը, որը մինչ այդ մարզխորհրդի նախագահի պաշտոնակատար էր:

Արցախահայությունը հրաժարվեց մասնակցել սեպտեմբերի 8-ին նշանակված Ադրբեջանի հանրապետության նախագահական ընտրություններին:

Այսպիսով, արցախահայության ազգային-ազատագրական պայքարը բարձրացավ նոր աստիճանի, որը չէր կարող չհարուցել Բաքվի հակազդեցությունը: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը 1991թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ արցախահայության այդ քայլը որակեց իբրև դավադրություն՝ «Ադրբեջանի ամբողջականության և անկախության դեմ» ու համապատասխան մարմիններին հանձնարարեց միջոցներ ձեռնարկել արցախահայությանը զինաթափելու և սեպտեմբերի 2-ի վերոհիշյալ նստաշրջանը կազմակերպողների նկատմամբ քրեական գործ հարուցելու ու պատասխանատվության ենթարկելու համար[3]: Ադրբեջանի ժողովրդական ճակատի պարագլուխ Ա.Ալիևը հեռուստատեսությամբ կոչ արեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել 200 հազարանոց զինյալ ուժեր՝ «այնտեղ կարգ սահմանելու համար»: Հենց ժողովրդական ճակատի ճնշման տակ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը[4] նոյեմբերի 26-ին որոշում ընդունեց լուծարել ԼՂԻՄ-ը և Ստեփանակերտը վերանվանել Խանքենդի: Սեպտեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահ ընտրված Այազ Մութալիբովի ղեկավարած իշխանությունն այդ քայլով փորձում էր հիմնավորել, որ չկա Լեռնային Ղարաբաղի մարզ, ուստի և չկա Ղարաբաղյան հիմնահարց: Հայաստանում Ադրբեջանի այդ որոշումը գնահատվեց որպես սադրանք՝ հայ ժողովրդի նկատմամբ: Հայաստանի Գերագույն խորհուրդը ողջունեց և պաշտպանեց ԼՂՀ-ի ստեղծումը, շեշտելով, որ քանի դեռ Ադրբեջանի իշխանությունների հետ բանակցությունները դրական արդյունք չեն տվել, ուստի միակ ճիշտ քայլը ԼՂՀ-ի ստեղծումն է և պայքարի շարունակումը[5]: Ստեղծված նոր պայմաններում Արցախի հիմնահարցի լուծման միջնորդի և երաշխավորի դերը ստանձնեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինն ու Նուրսուլթան Նազարբաևը: Նրանք ժամանելով Անդրկովկաս, սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում բանակցություններ վարեցին ԼՂՀ ղեկավարության հետ, իսկ հաջորդ օրը Ժելեզնովոդսկում ընդունեցին հայտարարություն, որով դրվեց Արցախի հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու գործընթացի սկիզբը:

Ադրբեջանն օր օրի ուժեղացնում էր ճնշումը, հատկապես Մարտունու և Հադրութի շրջանների վրա: Հադրութի շրջանի խառը բնակչություն ունեցող

Տող գյուղում սրված իրավիճակն իր գագաթնակետին հասավ. երբ հոկտեմբերի 17-ի գիշերը ադրբեջանական զինված մի հրոսակախումբ ներխուժելով Դանիելյանների տուն գնդակահարեց և խոշտանգեց ամբողջ ընտանիքը[6]: Այնտեղ ուղարկված գնդապետ Ա.Տեր-Թադևոսյանը պատվով կատարեց ստացած հանձնարարությունը: 1991թ. հոկտեմբերի վերջին Տողը լրիվ ազատագրվեց: Հայ ինքնապաշտպանները փառքով էին պաշտպանում նաև երկրամասի սահմանամերձ մյուս բնակավայրերը: Ադրբեջանում հակահայկական, հակաարցախյան մոլուցքը դուրս էր գալիս իր սահմաններից: Բաքվի «Ազադլըգ» /«Ազատություն»/ հրապարակում Ազգային ճակատի կողմից անցկացվող հանրահավաքներում Արցախը հողին հավասարեցնելու կոչեր էին հնչում: Ազգային ճակատի «Գորշ քայլեր» կազմակերպությունը կոչ էր անում համամուսուլմանական ճակատը ստեղծել հայերի դեմ և միանալ Թուրքիային:

Արցախահայության կարևոր խնդիրներից էր ամրապնդել նորաստեղծ հանրապետությունը, որի ղեկավարությունը օր-օրի իր ձեռքում էր կենտրոնացնում իշխանության օղակները և երկրամասի պաշտպանության գործը: Վերջապես ընդհատակից դուրս եկավ ինքնապաշտպանական ջոկատների ընդհանուր հրամանատարությունը, որը գլխավորում էր Սերժ Սարգսյանը: Նա և հանրապետության Գործադիր խորհրդի նախագահ Լեոնարդ Պետրոսյանը, ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ Ռոբերտ Քոչարյանը, Մուրադիկ Պետրոսյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը և ուրիշներ ձեռնամուխ եղան Արցախի ինքնապաշտպանության բանակի ստեղծմանը: Իսկ դա Արցախի հանրապետության կայացման ճանապարհին ամենակարևոր և անհետաձգելի ձեռնարկումներից էր:

1991թ. աշնան վերջին և ձմռան սկզբին արցախահայության վիճակը էլ ավելի ծանրացավ: Օգոստոսի 24-ից դադարեցվել էին ինքնաթիռների թռիչքները Ստեփանակերտ, սեպտեմբերից մուտք չէր գործում գնացքների ոչ մի շարժակազմ, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէր աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկությունը, հաճախակի անջատվում էր Ստեփանակերտի էլեկտրասնուցումը, խիստ վտանգի տակ էր գազի մուտքը[7]: Ադրբեջանը նոր ուժեր և բավականին ռազմական տեխնիկա կենտրոնացրեց Լեռնային Ղարաբաղի ադրբեջանաբնակ գյուղերում, սահմանամերձ Աղդամ, Միրբաշիր, Ֆիզուլի և Լաչին քաղաքներում, ինչպես

նաև Շուշիում: Փաստորեն, Արցախը լրիվ հայտնվեց Ադրբեջանի ռազմական և տնտեսական շրջափակման մեջ: Ստեփանակերտի շուրջ գտնվող ադրբեջանական բոլոր բնակավայրերը, մանավանդ Շուշի քաղաքը, վեր էին ածվել ռազմական հենակետի: Ստեփանակերտը և մոտակա հայկական բնակավայրերը 1991թ. նոյեմբերից սկսած անընդմեջ հարվածի տակ էին: Արդեն դեկտեմբերին Արցախը ներքաշվեց պատերազմական գործողությունների մեջ: Ադրբեջանը բացահայտ պատերազմ սկսեց Արցախը նվաճելու և հայաթափելու համար: Շուշիից, Կրկժանից, Ջանհասանից, Մալիբեյլուից և Խոջալուից ադրբեջանական զինյալ կազմավորումները տարբեր տրամաչափի հրանոթներից անընդհատ ռմբակոծում էին Ստեփանակերտը և մոտակա հայկական գյուղերը: Ավերվեցին մեծ թվով բնակելի շենքեր, հիմնարկ-ձեռնարկություններ, այդ թվում մարզկոմի և մարզխորհրդի նախկին շենքերը, կենտրոնական հեռագրատունը, մշակութային մի շարք կենտրոններ: Այդ պայմաններում մարզխորհրդի և ինքնապաշտպանական շտաբի հրահանգով քաղաքի գրեթե բոլոր շենքերի և շինությունների ներքնահարկերը կարգի բերվեցին և վերածվեցին ապաստարանների:

Արցախյան ինքնապաշտպանական ջոկատների թիվն անընդհատ ավելանում էր: Հայաստանից և այլ տեղերից Արցախ էին գալիս հարյուրավոր կամավորներ և մտնում ինքնապաշտպանական ջոկատներ: Զենք, զինամթերք, հագուստ, սննդամթերք և պաշտպանության այլ միջոցներ Արցախ էին հասցվում ուղղաթիռներով: Շուտով այդ գործի մեջ ներգրավվեց նաև հայկական սփյուռքը: Ի վերջո, պարզ դարձավ, որ միայն կամավորներով հնարավոր չէ փրկել Արցախը: Միայն կանոնավոր մարտունակ բանակը կարող էր լուծել պաշտպանության ծառացած խնդիրը: Պաշտպանության ամրապնդման գործողություններից զատ կարևոր խնդիր էր Արցախի հանրապետության կայացման գործընթացի արագացումը: Այդ առումով կարևոր էր 1991թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Գործադիր խորհրդի նստաշրջանը, որը որոշեց հանրապետությունում անցկացնել հանրաքվե: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեն նշանակվեց դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության օրը: Այդ օրը արցախահայությունը պետք է համաժողովրդական քվեով հաստատեր սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունը: Նոյեմբերի 27-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Պետխորհրդի

նիստը քննարկելով «ԼՂԻՄ-ում և Ադրբեջանի հանրապետության ու Հայաստանի հանրապետության սահմանամերձ շրջաններում իրադրության կայունացման միջոցառումների մասին» հարցը, ընդունեց հակահայկական, կիսատ-պռատ ու անիրականանալի որոշում: Դրանով Ադրբեջանի և Հայաստանի հանրապետություններին առաջարկվում էր չեղյալ հայտարարել այն բոլոր ակտերը, որոնք փոխում են ԽՍՀՄ սահմանադրության մեջ արձանագրված ԼՂԻՄ իրավական կարգավիճակը, այսինքն՝ ԼՂԻՄ-ի տարածքում վերականգնել սահմանադրական կարգը, երկու հանրապետությունների միջև բանակցությունները շարունակել Ժելեզնովոդսկի կոմյունիկեին համապատասխան, կոնֆլիկտի գոտուց դուրս բերել ապօրինի զինված կազմավորումները, երկու հանրապետությունների միջև սահմանների երկայնքով ստեղծել անվտանգության գոտի, վերսկսել երկաթուղային տրանսպորտի, գազատամատակարարման և այդ հանրապետությունների կենսապահովման հետ կապված մյուս հաղորդակցությունների աշխատանքը[8]: Ադրբեջանը հրաժարվեց այդ որոշումը կատարելուց, իսկ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է վճռվի միջազգային մակարդակով: Այդպիսով, Հայաստանը սկսեց Արցախի հիմնախնդրի միջազգայնացման գործընթացը:

Հանրաքվեին ներկա գտնվելու նպատակով աշխարհի մի շարք երկրներից եկան 40 անկախ դիտորդներ: Քվեարկության իրավունք ունեցող 132328 արցախցիներից քվեարկությանը ներկայացան 108736-ը /82,2%/, որոնցից 108615-ը /99,89%/ «այո» ասացին Արցախի անկախությանը: Հանրապետության տարածքում ապրող մահմեդականները հանրաքվեին չմասնակցեցին[9]:

Դիտորդներն արձանագրեցին, որ ԼՂՀ-ում հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան և ոչ մի խախտում չի արձանագրվել: Նրանք դիմում հղեցին աշխարհի բոլոր խորհրդարաններին և Ռուսաստանի նախագահին: Այդ հույժ կարևոր փաստաթղթերում ասվում էր, որ հանրաքվեի անցկացմանը ադրբեջանական կողմը ամեն կերպ փորձել է խոչընդոտել: Միայն այդ օրը նրանց կողմից արձակված հրթիռների և արկերի պայթյունից զոհվել են 7 և վիրավորվել՝ 11 մարդ[10]: Անկախ դիտորդներն արձանագրեցին, որ ադրբեջանական կողմը «վարում է զավթողական պատերազմ՝ ազատության և ժողովրդավարության համար մարտնչող

Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ»: Նրանք գտնում էին, որ Ռուսաստանը պետք է հավաստի 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու պարտականությունը և լինի Արցախի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը: Բացի այդ, նրանք առաջարկում էին մինչև Արցախից խորհրդային բանակի հեռանալը, հայերին վերադարձնել նրա աջակցությամբ զավթված 24 հայկական գյուղերը[11]:

ԼՂՀ գործադիր խորհրդի կողմից հաստատվեց հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակավոր կանոնադրությունը: Ամրագրվեց, որ մինչև հանրապետության սահմանադրության ընդունումն, այնտեղ կգործեն միայն ԽՍՀՄ օրենքները[12]:

ԼՂՀ գործադիր խորհրդի հաջորդ նիստը, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 19-ին, վավերացրեց ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտե ստեղծելու որոշումը: Այն ստեղծվել էր երկու օր առաջ՝ դեկտեմբերի 17-ին: Նրա ղեկավար էր նշանակվել ԼՂՀ գործադիր խորհրդի նախագահ Լեոնարդ Պետրոսյանը: Գործադիր խորհուրդը նաև որոշեց հանրապետության տարածքում ԽՍՀՄ ռազմական միավորումների գոյությունը համարել անօրինական՝ դրանից բխող հետևանքներով[13]:

Ադրբեջանը շարունակում էր չընդունել ԼՂՀ գոյության փաստը և իր ծավալապաշտական նկրտումներն իրագործելու համար ժամ առ ժամ ուժեղացնում էր ռազմական ճնշումը[14]:

Դեկտեմբերի 19-ին Շուշիից ադրբեջանցիները լայնածավալ հարձակում սկսեցին Քարին տակ գյուղի վրա: Գյուղի ինքնապաշտպանության ուժերը արժանի հակահարված հասցրին թշնամուն: Այդ օրերին Ստեփանակերտի վրա արձակվեցին «Ալազան» և «Տ-12» տիպի արկեր: Հարձակումներ եղան նաև Շահումյանի, Մարտակերտի և Հադրութի սահմանամերձ գյուղերի վրա:

Խորհրդային զինված ուժերը սկսել էին հեռանալ Արցախից: Չկար հաց, վառելիք, Ստեփանակերտը զրկվել էր ջրից: Երևանից թռչող ուղղաթիռները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, վայրէջք էին կատարում Քոլատակում, Կարմիր շուկայում, Ճարտարում, Գիշիում, Տումիում, որտեղ հնարավոր էր: Նրանք Արցախ էին հասցնում պաշտպանության միջոցներ, սննդամթերք, դեղորայք, վառելիք, կամավորներ, Երևան տեղափոխում հիվանդներին, վիրավորներին, երեխաներին, տարիքա-

վորներին, կանանց: ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը այդ օրերին «Երկիր» օրաթերթի թղթակցի այն հարցին, թե ինչպե՞ս է Հայաստանը պետական մակարդակով զբաղվում Արցախի պաշտպանության խնդրով, երբ Ալմա-Աթայում ստորագրվել է համաձայնագիր, որի համաձայն Հայաստանը պարտավոր է հարգել հարևան պետության սահմանները, պատասխանել է. «Արցախի ժողովուրդն ինքն է կազմակերպում իր պաշտպանությունը, իսկ մենք նրան օգնում ենք, ինչպես կարող ենք: Մյուս հանգամանքն այն է, որ մենք կարող ենք Արցախին օգնել որպես դաշնակից պետություն... Արցախի ժողովուրդը մերն է, Արցախի հողը մերն է, և մենք իրավունք չունենք այս հարցում մի կողմ քաշվել... Արցախը պետք է վերածենք հզոր ռազմական ամրոցի: Ադրբեջանը վաղ թե ուշ կհամակերպվի Արցախի գոյության հետ... Ադրբեջանցիներն իրենց արմատները չունեն Արցախում և չեն ուզում նրա համար զոհվել: Նրանց զոռով քշում բերում են մեր դեմ կռվելու...»[15]:

ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. դեկտեմբերի 26-ի փակ նիստում ընդունեց հայտարարություն, որով ԱՊՀ-ի երկրներին կոչ է անում «գործուն միջոցառումներ ձեռք առնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության և կենսագործունեության ապահովման համար»[16]: Ի պատասխան այդ հայտարարության, Ադրբեջանը նույն օրը դադարեցրեց Ստեփանակերտի էլեկտրագազամատակարարումը, իսկ 28-ին պայթեցվեց Աղդամից Ստեփանակերտ մտնող և այնտեղից էլ շրջանները գնացող գազատարը:

Նման ծանր պայմաններում 1991թ. դեկտեմբերի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցան խորհրդարանի ընտրությունները: Այն անցավ Ադրբեջանի կողմից ծավալված պատերազմական գործողությունների պայմաններում: Այդ օրը արցախցիները տվեցին տասնութ զոհ և տասնյակ վիրավորներ[17], ավերվեցին ավելի քան 40 բնակավայրեր, Ստեփանակերտի մանկական և մարզային հիվանդանոցները, մի շարք ուրիշ շինություններ: Երկու օր անց՝ դեկտեմբերի 30-ին, ԱՊՀ երկրների ղեկավարները դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին, կոչ արեցին Արցախյան հիմնահարցը լուծելու համար արագացնել բանակցությունները, սակայն Այազ Մութալիբովը ոչ միայն չընդառաջեց, այլև պահանջեց չմիջամտել Ադրբեջանի անկախ հանրապետության ներքին գործերին:

1992թ. հունվարի 14-ին Ստեփանակերտ ժամանեց Անգլիայի լորդերի պալատի փոխ խոսնակ Քերոլայն Քոքսը: Նրա հետ էին մի շարք երկրներից 10 դիտորդներ: Եկել էին նաև Ռուսաստանի մի խումբ խորհրդարանականներ և արտասահմանյան լրագրողներ: Նրանք եկել էին ներկա գտնվելու ԼՂՀ նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանին:

1992թ. հունվարի 6-ին Ստեփանակերտի նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում 51 պատգամավորից 48-ի մասնակցությամբ և 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ իր աշխատանքը սկսեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Հենց առաջին նիստում ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հռչակագիրը», ըստ որի ԼՂՀ-ը հայտարարվեց անկախ պետություն, որի տարածքում պետք է գործեին ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները: Նրանում նաև ասվում է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակչները հանրապետության քաղաքացիներ են, որոնք գտնվում են ԼՂՀ պաշտպանության տակ: Հանրապետության ամբողջ տարածքը և նյութական ու հոգևոր հարստությունները պատկանում են հանրապետությանը և նրա ժողովրդին: Հայրենիքը պաշտպանելու համար ստեղծվում են զինված ուժեր, ԼՂՀ պետական լեզուն հայերենն է[18]: Նաև որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, որոնց հիմնական խնդիրը պետք է լինի ԼՂՀ սահմանների պաշտպանությունը և բնակչության անվտանգության ապահովումը: Այդ օրերին հանրապետության զինված ուժերում ընդգրկված էին մոտ 1000 կամավորականներ[19]:

Մի քանի օր անց՝ հունվարի 11-ին, տեղի ունեցած ԼՂՀ Գերագույն խորհրդի լրացուցիչ ընտրությունների ժամանակ ընտրվեց ևս 9 պատգամավոր:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1992թ. հունվարի 7-ին սկսեց զբաղվել իր նախագահի ընտրության հարցով: Միայն հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, 42 ձայնով ԼՂՀ Գերագույն Խորհրդի առաջին նախագահ ընտրվեց 33-ամյա Արթուր Մկրտչյանը: Նախագահի տեղակալ ընտրվեց Գեորգի Պետրոսյանը, քարտուղար՝ Վլադիմիր Հակոբյանը: Նախագահի առաջին տեղակալի տեղը մնաց թափուր, որովհետև այդ տեղի համար առաջադրված թեկնածուներից ոչ մեկն անհրաժեշտ ձայներ չստացավ: Ընդունվեց արտաքին դրության մասին օրենք և կազմվեցին մի շարք հանձնաժողովներ: Պաշտպանության և

անվտանգության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Վալերի Բաբայանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Լևոն-Մելիք Շահնազարյանը, կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվական հանձնաժողովի նախագահ՝ Համլետ Գրիգորյանը: Մարզային դատարանն ու դատախազությունը համապատասխանաբար վերանվանվեցին ԼՂՀ ԼՂՀ գերագույն դատարան և գերագույն դատախազություն: Ստեղծվեց հանրապետության նախարարների խորհուրդ, որի նախագահ հաստատվեց տնտեսագետ Օլեգ Եսայանը, տեղակալ՝ Բորիս Առուշանյանը:

ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, մասնավորապես ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն և օգնել կանխելու արցախահայության ցեղասպանությունը[20]: Այսպիսով, 1991թ. սեպտեմբերից Արցախում սկսված հանրապետու-թյան կայացման գործընթացը մտավ ավելի ակտիվ և պատասխանատու շրջան:

---

[1] Бакинский рабочий, 30.08.1991.
[2] Հայաստանի Հանրապետություն, 03.09.1991:
[3] Бакинский рабочий, 04.09.1991.
[4] Նույն տեղում, 27.11.1991:
[5] Ազգ, 04.09.1991:
[6] Ա.Արշակյան, Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Ե., 1993, էջ 445-459:
[7] Հրանտ Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 144:
[8] Հայաստանի Հանրապետություն, 29.11.1991:
[9] Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի որոշ իրավաքաղաքական հարցեր, Ե., 1994, էջ 17:
[10] Անդրանիկ Արշակյան, նշվ. աշխ., էջ 515-520:
[11] Հայաստանի Հանրապետություն, 14.12.1991:
[12] Նույն տեղում, 28.11.1991:
[13] Բ.Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 292:
[14] Երկիր, 21.12.1991:
[15] Նույն տեղում, 28.11.1991:
[16] Հայաստանի Հանրապետություն, 27.12.1991:
[17] Անդրանիկ Արշակյան, նշվ. աշխ., էջ 550-567, 630-631:
[18] Հրանտ Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 151:
[19] Սենուր Հասրաթյան, Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998:
[20] Հրանտ Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 153: